

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/5

6 դեկտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Թերմորեքս» ՓԲԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի 02.11.2016թ. թիվ 323/10 որոշման դեմ:

«Թերմորեքս» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի կողմից 02.11.2016թ. կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 323/10 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով կիրառվել է վարչական տույժ՝ նշանակվել է տուգանք նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.2-րդ հոդվածը: Որոշման մեջ նշվում է, որ «Թերմորեքս» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 2016թ. օգոստոս ամսին ԵՏՄ անդամ երկրների հետ փոխադարձ առևտուր իրականացնելիս չի ներկայացվել վիճակագրական հաշվետվություն:

Հարկ է նշել, որ ընկերության կողմից 2016թ. օգոստոս ամսին ԵՏՄ անդամ երկրներից իրականացվել է 1 ներմուծում և 3 արտահանում, որոնց համար ՀՀ կառավարության 23.04.2014թ. թիվ 447-Ն որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացվել են վիճակագրական հաշվետվություններ:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ 28.10.2016թ. գործի քննության ժամանակ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան աշխատակիցների կողմից չի նշվել, թե ընկերության կողմից ԵՏՄ անդամ երկրների հետ իրականացված որ գործարքի վերաբերյալ չի ներկայացվել վիճակագրական հաշվետվություն: Ավելին, ոչ արձանագրության, ոչ վարչական տույժ նշանակելու որոշման մեջ չի նշվում, թե որ գործարքի վերաբերյալ չի ներկայացվել վիճակագրական հաշվետվություն: Ստացվում է, որ առանց որևէ խախտում թույլ տալու, պարզապես այն հիմքով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալից մաքսատանը գնացել է գրություն (20.09.2016թ.-ի թիվ 02/7-1/1204487-16), կիրառվել է վարչական տույժ:

Քանի որ թույլ չի տրվել որևէ խախտում՝ ԵՏՄ-ի բոլոր գործարքների համար ներկայացվել են վիճակագրական հաշվետվություններ, հետևապես «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.2-րդ հոդվածը կիրառելի չէ:

Ելնելով վերոշարադրյալից՝ գանգատաբերը խնդրում է բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի կողմից 02.11.2016թ. կայացված թիվ 323/10 որոշումը և կարճել վարչական վարույթի գործը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալը, վերանայելով «Թերմորեքս» ՓԲԸ տնօրեն Արմեն Անտոնյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ նյութերը պարզել է, որ «Թերմորեքս» ՓԲԸ-ն օգոստոս ամսին ԵՏՄ անդամ երկրների հետ փոխադարձ առևտուր իրականացնելիս չի ներկայացրել վիճակագրական հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ԿԱ

ՊԵԿ նախագահի առաջին տեղակալի 20.09.2016թ. թիվ 02/7-1/204487-16 գրության: Վիճակագրության վարման կանոնները և ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձևը սահմանված է ՀՀ կառավարության 23.04.2014 թվականի թիվ 447-Ն որոշմամբ:

«Թերմորեքս» ՓԲԸ կողմից խախտվել են նշված որոշման 7-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված պահանջները, ինչը հանդիսանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.2 հոդվածի խախտում: Այսինքն, «Թերմորեքս» ՓԲԸ տնօրեն Արմեն Անտոնյանը թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.2 հոդվածով սահմանված կանոնների խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 32-րդ և 234-րդ հոդվածներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի կողմից 02.11.2016թ. կայացվել է թիվ 323/10 որոշումը, որով «Թերմորեքս» ՓԲԸ տնօրեն Արմեն Անտոնյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Թերմորեքս» ՓԲԸ կողմից 2016թ. օգոստոս ամսվա ընթացքում կատարվել է ընդամենը թվով 6 գործարք, այն է՝ թվով 5 արտահանման և թվով 1 ներմուծման գործարքներ:

Ներմուծման գործարքի վերաբերյալ ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացվել է վիճակագրական հաշվետվություն: Ինչ վերաբերվում է արտահանման գործարքներին, ապա հարկ է նշել, որ ընկերության կողմից կատարվել է թվով 5 արտահանման գործարք, սակայն ներկայացվել է ընդամենը 4 վիճակագրական հաշվետվություն: Այսպես, 01.08.2016թ. արտահանվել են ջերմակարգավորիչներ, որոնց արժեքը կազմել է 2.890.0 ԱՄՆ դոլար, 01.08.2016թ. արտահանվել են ջերմակարգավորիչներ, որոնց արժեքը կազմել է 1.199.350.0 ՌԴ ռուբլի, 13.08.2016թ. արտահանվել են ջերմակարգավորիչներ, որոնց արժեքը կազմել է 5.367.0 ԱՄՆ դոլար, 16.08.2016թ. արտահանվել են ջերմակարգավորիչներ, որոնց արժեքը կազմել է 1.750.250 ՌԴ ռուբլի և 27.08.2016թ. արտահանվել է տերմոկոնտեյներ, որի արժեքը կազմել է 1.127.250 ՌԴ ռուբլի:

Վերոգրյալից հետևում է, որ «Թերմորեքս» ՓԲԸ կողմից խախտվել են ՀՀ կառավարության 23.04.2014 թվականի թիվ 447-Ն որոշմամբ նախատեսված պահանջները, որի համար ընկերության տնօրենի նկատմամբ կիրառվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.2 հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի 02.11.2016թ. թիվ 323/10 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ